ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ ԿՎ/07/2022 ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» մայիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով ՀՀ վարչական դատարանի դատավոր Արթուր Արշավիրի Ծատուրյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 24-ի թիվ ՎԻՎ 23/22 որոշմամբ որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի հիմքով հարուցված 2022 թվականի մայիսի 24-ի N ԿՎ/07/2022 կարգապահական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

1.1 Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել ՀՀ վարչական դատարանի դատավոր Արթուր Արշավիրի Ծատուրյանի կողմից 2021 թվականի մայիսի 28-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի,

269

եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) Բ.6.1 «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում՝ տարեվերջին իր անկանխիկ դրամական միջոցները Հայտարարագրում չներկայացնելը, մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Արթուր Արշավիրի Ծատուրյանի բանկային հաշիվներին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է եղել 1.100.000 (մեկ միլիոն հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ հաշվի մնացորդ:

1.2 2022 թվականի մայիսի 24-ին Արթուր Ծատուրյանի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ23/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.3 2022 թվականի մայիսի 27-ին Արթուր Ծատուրյանի ներկայացուցիչ՝ Արսեն Հովհաննիսյանը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակ Մ-2216-2022 մտից գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել դիրքորոշում, ինչպես նաև [redacted] և [redacted] բանկային հաշիվների քաղվածքները:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 27-ին, Արթուր Ծատուրյանի ներկայացուցիչներ՝ Արսեն Հովհաննիսյանի և Հայկ Ծատուրյանի մասնակցությամբ իրականացվել է գործի քննություն:

2. <u>Վարույթի մասնակցի բացատրությունը</u>.

Արթուր Արշավիրի Ծատուրյանի ներկայացուցիչը 2022 թվականի մայիսի 27-ին թիվ Մ-2016-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ իր վստահորդի բանկային հաշիվներին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դրամական միջոցների մնացորդը արդեն իսկ հայտարարագրվել է որպես հայտարարագրման ենթակա եկամուտ, ինչի արդյունքում դրանց՝ որպես դրամական միջոցների վերաբերյալ առանձին նշում չի կատարվել: Միաժամանակ, թեև Արթուր Արշավիրի Ծատուրյանի կողմից փաստացի չի լրացվել հայտարարագրի համապատասխան տեղեկատվությունը 2020 թվականի տարեվերջում դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ,

270

այնուամենայնիվ, Հանձնաժողովի կողմից հայտնաբերված անհամապատասխանությունը ցանկացած դեպքում հաղթահարելի է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դա բացառապես ձևական պահանջի չպահպանման արդյունք է, ինչպես նաև այն, որ բանկային հաշիվներում առկա չհայտարարագրված դրամական միջոցների մնացորդների ծագման աղբյուրները համընկնում են հայտարարատու անձի եկամտի աղբյուրների հետ և հայտարարագրված են ընդհանուր եկամտի շրջանակներում:

Մասնավորապես, նշել է, որ դրամական միջոցները գոյացել են հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների համար վճարված եկամտային հարկի վերադարձված գումարներից, ինչպես նաև սոցիալական փաթեթի համար վճարվող գումարներից, որոնք իրենց հերթին արտացոլվել են հայտարարագրման ենթակա եկամուտների շարքում:

3. ***Որոշումն ընդունելու իրավական և փաստական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.***

3.1 Արթուր Ծատուրյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած), իսկ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը: Դրանից բացի՝ նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ դրամական միջոցի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը:

3.3 Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված աշխատանքի վարձատրությունը կամ դրան

271

հավասարեցված այլ վճարումները: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝ եկամտի տեսակը, եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն. եկամտի չափը (գումարը), եկամտի արժույթը:

3.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

3.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

3.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

212

3.9 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է գործի վարույթը կարճելու մասին որոշում (...) բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ անզգուշությամբ կատարվել է խախտում, այն է՝

ՀՀ վարչական դատարանի դատավոր Արթուր Արշավիրի Ծատուրյանը Հայտարարագրում Բ.6.1 «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում՝ տարեվերջին, չի հայտարարագրել իր անկանխիկ դրամական միջոցները, մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Արթուր Արշավիրի Ծատուրյանի բանկային հաշիվներին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է եղել 1,100,000 (մեկ միլիոն հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ հաշվի մնացորդ: Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել

273

պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ Արթուր Արշավիրի Ծատուրյանի բանկային հաշիվներին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դրամական միջոցների մնացորդը արդեն իսկ հայտարարագրվել են «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում որպես հայտարարագրման ենթակա եկամուտ, որպիսի պարագայում ներկայացվել են եկամտի ստացման տեսակը, աղբյուրը , չափը:

Բացի այդ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Արթուր Ծատուրյանի բանկային հաշիվներում առկա չհայտարարագրված դրամական միջոցների մնացորդների ծագման աղբյուրները գոյացել են հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների համար վճարված եկամտային հարկի վերադարձված գումարներից, ինչպես նաև սոցիալական փաթեթի համար վճարվող գումարներից, որը հաստատվում է Արթուր Ծատուրյանի ներկայացուցիչների կողմից 27.05.2022 թվականին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը ներկայացված

հաշիվների քաղվածքներով:

Նման պայմաններում Հանձնաժողովը էական է համարում այն, որ հայտարարատուի կողմից ներկայացվել են այնպիսի ապացույցներ, որոնցով հավաստվում է չհայտարարագրված դրամական միջոցների աղբյուրների օրինականությունը՝ ապահովելով պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն

274

զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ Արթուր Ծատուրյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:

Սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորը պարտավոր է պահպանել սույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները: **Վարքագծի կանոնները չպահպանելը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության**:

Սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ վարույթ հարուցած մարմինը կարճում է կարգապահական վարույթը, եթե՝ ***առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք***.

Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Արարքը չի համարվում կարգապահական խախտում, ***եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով*** կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:

Հաշվի առնելով Սահմանադրական օրենքով ամրագրված վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունը և հիմք ընդունելով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթում հաստատված հանգամանքները՝ Հանձնաժողովը գտնում է,

245

որ Արթուր Ծատուրյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր չներկայացնելու արարքը հանրային վտանգավորության տեսակետից նվազ նշանակություն ունենալու պարագայում, 2022 թվականի մայիսի 24-ին հարուցված թիվ N ԿՎ/07/2022 կարգապահական վարույթում առկա չէ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովը հաստատված է համարում, որ ՀՀ վարչական դատարանի դատավոր Արթուր Արշավիրի Ծատուրյանի նկատմամբ 2022 թվականի մայիսի 19-ին հարուցված թիվ N ԿՎ/07/2022 կարգապահական վարույթում առկա չէ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 25-րդ հոդվածի 6.1-րդ մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ վարչական դատարանի դատավոր Արթուր Արշավիրի Ծատուրյանի նկատմամբ 2022 թվականի մայիսի 24-ին հարուցված թիվ N ԿՎ/07/2022 կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայությամբ:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Արթուր Ծատուրյանին, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով և ՀՀ արդարադատության նախարարին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

276